ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գ.Պտղունք 12.07.2012թ.

Ս/թ հուլիսի 11 ժ 13՝՝ -ին Պտղունք համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավար Սամվել Զեյնալյանի հաշվետվությունը 2012 թվականի առաջին կիսամյակում կայացած աշխատանքների մասով:

Հաշվետվությանը ներկա էին աշխատակազմի, դպրոցի, մանկապարտեզի կոլեկտիվի անդամներ: Հաշվետվությանը ներկա էր նաև Արմավիրի մարզպետի տեղակալ պարոն Դ. Սամսոնյանը:

Համայնքի ղեկավարը համայնքի բնակչությանը ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները: Քննարկվեցին մի շարք հարցեր, որոնք ունեն հրատապ լուծման անհրաժեշտություն:

- Համայնքի բնակիչների կողմից բարձրացվեցին բազմաբնակարան շենքի գազամատակարարման և տանիքի անմխիթար վիճակի հարցը, դպրոցի շենքի անմխիթար վիճակի և նոր շենքի կառուցման անհրաժեշտության հարցը:
- Բարձրացվեց նաև նորաստեղծ թաղամասում խմելու ջրի ինչպես նաև անվտանգ էլեկտրամատակարարման բացակայության հարցը:

Գյուղացիները հետաքրքրվեցին կարկտահարությունից ստացված վնասների, ինչպես նաև ծիրանի այգիների ցրտահարությունից առաջացած վնասների օգնության մասին:

- Եղան դժգոհություններ հողի և ջրի վարձավճարների թանկությունից, որն էլ պատճառ է, որ որոշ գյուղացիներ հրաժարվել են հող մշակելուց:

Մանկապարտեզի կոլեկտիվը հայտնեց իր շնորհակալությունը գյուղապետարանին՝ մանկապարտեզի աշխատանքներին աջակցելու, ինչպես նաև շենքի բարեկարգման աշխատանքները բարձր մակարդակով իրականացնելու կապակցությամբ:

Արմավիրի փոխմարզպետ Դ.Սամսոնյանը համայնքի աշխատանքները գնահատելով բավարար խոստացավ, որ նշված հարցերը կներկայացվի մարզպետ Ա.Ղահրամանյանին և առաջիկայում կգտնվեն դրանց լուծման համապատասխան ծրագրեր և միջոցներ:

Պտղունք հ/դ, ժողովի նախագահ՝ Ս.Զեյնալյան

աշխատակազմի քարտուղար

ժողովի քարտուղար՝ Կ.Արթենյան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ԱՌ 01.01.2012Թ ՄԻՆՉԵՎ 01.07.2012Թ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Հարգելի համագյուղացիներ հաշվետու ժամանակահատվածում մեր կողմից հաջողվել է իրականացնել հետևյալ աշխատանքները:

Եկամտային մաս

Եկամուտներ (մուտքային մաս)

	Ցուցանիշի անվանումը	Պլանը կիսամյակ	Փաստացի կատարում	%
	Գույքահարկ շենք շինություն	775.0	339.6	43.8
2	Գույքահարկ փոխադրամիջոց	2025.0	1200.2	59.2
3	Հողի հարկ	3250.0	1309.1	40.2
4	Վարձ. Հողի վարձ	240.0	122.8	51.1
5	Այլ ոչ հարկային եկամուտներ	525.0	269.970	51.4
6	Տեղական տուրքեր	125.0	66.8	53.4
7	Դոտացիա	7607.0	7605.4	100
	ԸՆԴԱՄԵՆԸ	14547.0	10913.87	75

Ծախսային մաս

	Ծախսված գումարի ուղվածությունը	Կիսամյակային պլան	Փաստացի կատարում	%
1	Գյուղապետարանի աշխատավարձ	5500.0	4693.4	85.3
2	Պարգևատրում	445.0	-	-
3	Սոցիալական վճարներ	1060.0	842.0	79.4
4	Էներգետիկ ծառայություն	450.0	320.0	71.1
5	Համակարգչային ծառայություն	22.0	21.6	98.2
6	Կապի ծառայություն	150.0	30.0	20
7	Ընդհանուր բնույթի այլ ծառայություն	400.0	38.7	10
[illegible]	Մեքենաներ և սարքավորումների ընթացիկ նորոգում	70.0	20.0	28.6
	[illegible]ենյակային նյութեր	300.0	100.0	33.3
	[illegible]ասնապրտի նյութեր	300.0	300.0	100
	[illegible]բահանություն	390.0	390.0	100
[illegible]	Տեղեկատվական ծառայություն	100.0	27.0	27
13	Երիտասարդական ծրագրեր	250.0	100.0	40
14	Սուբսիդիա	4664.0	3097.0	66.4
15	Սոց օգնություն	1000.0	545.0	54.5
	ԸՆԴԱՄԵՆԸ	14656.0	10524.8	71.8

Պտղունք համայնքի ղեկավար Ս.Զեյնալյան